Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Բագրատ Բադալյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Բագրատ Բադալյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, 2019 թ. հունիսի 5-ից 7-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Եվրոպական հանձնաժողով, Ռումինիայի տրանսպորտի նախարար

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Արևելյան գործընկերության տրանսպորտի հարցերով նախարարական հանդիպմանը

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

2019թ. հունիսի 6-ին Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում կայացել է Արևելյան գործընկերության տրանսպորտի հարցերով նախարարական հանդիպումը:

Նշյալ միջոցառումը Եվրոպական միության տրանսպորտային կապակցվածության կարևորագույն իրադարձություններից է, որը միավորում է Եվրոպական հանձնաժողովի, Արևելյան գործընկերության երկրների տրանսպորտի նախարարների, Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի ներկայացուցիչների, ինչպես նաև կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչների և փորձագետների, ոլորտային քաղաքականություն մշակողների, կարգավորողների, ներդրողների և այլ շահագրգիռ կողմերի:

Հանդիպման նպատակն է խթանել տրանսպորտային կապը Եվրոպական միության անդամ պետությունների և Արևելյան գործընկեր երկրների միջև, բարձրացնել

սահմանային անցուղիների արդյունավետությունը և ապահովել ճանապարհների անվտանգության բարձր մակարդակ:

Միջոցառման ընթացքում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են տրանսպորտային համագործակցության զարգացման կարևորությունը զբոսաշրջության ոլորտի տեսանկյունից, ապրանքների հուսալի և անվտանգ փոխադրման ապահովումը ԵՄ-ի և Արևելյան գործընկերության երկրների միջև:

Քննարկվել են նաև տրանսպորտային և ճանապարհային ենթակառուցվածքների բարելավմանը միտված քայլերի իրականացման, ինչպես նաև ԵՄ-ի և Արևելյան գործընկերության երկրների միջև տրանսպորտային ցանցերի պլանավորման հետ կապված խնդիրներն ու անելիքները:

Նախարարական հանդիպմանը Բագրատ Բաղալյանը ներկայացրել է Հայաստանի առաջնային ենթակառուցվածքային ծրագրերը, տրանսպորտային հասանելիությունը եվրոպական ցանցին, ճանապարհային անվտանգության հետ կապված խնդիրներն ու մարտահրավերները, ինչպես նաև տրանսպորտային ցանցի զարգացմանն ուղղված ներդրումային ծրագրերը:

Մասնավորապես, փոխնախարարը անդրադարձել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» և Մ6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգման և բարելավման ծրագրերին, որոնք ընդգրկված են ԵՄ Արևելյան գործընկերության առաջնային նախագծերի ցանկում և ուղղված են արևելյան տարածաշրջանի տրանսպորտային ցանցերը Եվրամիության տրանսպորտային ցանցերի հետ կապելուն:

Ներկայացվել է նաև ինչպես Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4 Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի ֆինանսավորման տարբերակները և այդ գործում եվրոպական ֆինանսական կառույցների մասնակցության հնարավորությունները, այնպես էլ Հայաստանում իրականացվող այլ ենթակառուցվածքային ծրագրերը և նոր նախագծերը, որոնք կարող են գրավել ԵՄ ֆինանսական կառույցների ուշադրությունը:

Իր ելույթում փոխնախարար Բաղալյանը ներկայացրել է Հայաստանում ճանապարհային անվտանգության արդի վիճակն ու խնդիրները, դրա բարելավմանն ուղված միջոցառումներն ու մարտահրավերները, ինչպես նաև բարձր է գնահատել Հայաստանի միջպետական ճանապարհների վտանգավոր հատվածներում երթևեկության անվտանգության բարձրացման նպատակով Եվրոպական ներդրումային բանկի կողմից տրվող աջակցությունը:

Նիստի ընթացքում ԵՄ հանձնակատարների կողմից կարևորվել է գոտի և ճանապարհ նախաձեռնության և տրանսեվրոպական տրանսպորտային ցանցերի (TEN-T) միջև փոխգործակցությունը, մասնավորապես՝ տրանսեվրոպական տրանսպորտային

ցանցերի ընդլայնման հարցը դեպի ԵՄ անդամ չհանդիսացող պետություններ և դրանից բխող ծրագրային առաջնահերթությունները:

Քննարկվել է նաև Արևելյան գործընկերության երկրների հեռանկարային դերը՝ որպես Եվրոպան և Ասիան կապող երկրների միջև կամուրջ, դրա իրականացմանն ուղղված ռազմավարական քայլեր ձեռնարկելու հնարավորությունները, ինչպես նաև մասնավոր հատվածից, ինստիտուցիոնալ ներդրողներից և հանրային բանկերից ֆինանսավորում ստանալու համար Արևելյան գործընկերության երկրներում առանցքային տրանսպորտային ենթակառուցվածքի առաջնահերթությունների իրականացումը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Բագրատ Բադալյանը Լյուքսեմբուրգ կատարած այցի ընթացքում հունիսի 6-ին հանդիպում է ունեցել Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում մանրամասն քննարկվել են բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերը, մասնավորապես՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-3 (Լանջիկ-Գյումրի ճանապարհահատված) իրականացման ընթացքը՝ աշխատանքների առաջընթացը և ռիսկերը, ինչպես նաև Մ6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի բարեհաջող ավարտը:

Կողմերն անդրադարձել են նաև Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ-4-ի Սիսիան-Քաջարան հատվածի իրականացման հեռանկարներին, ծրագրի իրականացմանը Եվրոպական ներդրումային բանկի մասնակցության և ֆինանսավորման հնարավորություններին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Հայաստանի Հանրապետության ճանապարհային անվտանգության բարելավման ուղղությամբ իրականացվող միջոցառումների, երթևեկության անվտանգության խթանման նպատակով նախատեսվող քարոզարշավի, ինչպես նաև ԵՆԲ-ի հետ կնքվող Ճանապարհային անվտանգության համաձայնագրի և դրա ներքո Հայաստանին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ կապված հարցեր: ԵՆԲ ներկայացուցիչների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել 2019 թ. սեպտեմբերին Երևանում կազմակերպել աշխատաժողով՝ ճանապարհային անվտանգության բարելավման, այդ ուղղությամբ կարողությունների և գիտելիքների ընդլայնման նպատակով:

Բանկի ներկայացուցիչներն իրենց հերթին ընդգծել են ճանապարհաշինության ոլորտում Հայաստանի հետ շարունակական համագործակցության կարևորությունը և հեռանկարային ծրագրերի նկատմամբ բանկի բարձր հետաքրքրվածությունը:

Արևելյան գործընկերության տրանսպորտի հարցերով նախարարական նիստի շրջանակներում Բագրատ Բադալյանը հանդիպել է նաև Ռումինիայի տրանսպորտի նախարար Ալեքսանդրու Ռեզվանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև տրանսպորտի ոլորտում համագործակցության տարբերակները, ինչպես նաև համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Նախարարական նիստի արդյունքում ԵՄ Արևելյան գործընկերության երկրների տրանսպորտի նախարարների կողմից ընդունվել է «Taking the Transport Cooperation Agenda Forward» խորագրով հռչակագիրը:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բագրատ Բադալյան

11.06.2019 թ.